ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

15 հոկտեմբերի **2018 թվականի N** 121-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ, 41-րդ հոդվածներով, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ ԲՓ 74 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական դրական եզրակացությունը, «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության 2018 թվականի հունիսի 05-ի թիվ 41 դիմումը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի հունիսի 29-ի թիվ Ֆ-217/18 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 3 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/274 թույլտվությունը Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյանի ավազի հանքավայրի հարակից տարածքներում (այսուհետ՝ Տարածք) հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4420354 Y=8460685, 2.X=4420265 Y=8460617, 3.X=4419880 Y=8460859, 4.X=4419646 Y=8460954, 5.X=4419101 Y=8461658, 6.X=4418964 Y=8461778, 7.X=4418742 Y=8461885, 8.X=4418437 Y=8461820, 9.X=4418131 Y=8461754, 10.X=4417906 Y=8461769, 11.X=4417533 Y=8461721, 12.X=4417351 Y=8461658, 13.X=4417350 Y=8461814, 14.X=4418652 Y=8462107, 15.X=4418913 Y=8462053, 16.X=4419105 Y=8461933, 17.X=4419565 Y=8461433, 18.X=4419780 Y=8461115, 19.X=4420079 Y=8460946 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված, բացառությամբ Շահումյանի ավազի հանքավայրի հետևյալ կոորդինատներով սահմանափակված տարածքի՝ 1.X=4419842 Y=8460874, 2.X=4419851 Y=8460897, 3.X=4419671 Y=8461023, 4.X=4419580 Y=8461134, 5.X=4419598 Y=8461152, 6.X=4419574 Y=8461183, 7.X=4419552 Y=8461168, 8.X=4419539 Y=8461185, 9.X=4419499 Y=8461159, 10.X=4419631 Y=8460993, 11.X=4419737 Y=8460917 (մակերեսը՝ 2.1 հա), 66.1 հա տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Կնքել Տարածքի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել Ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,

2) հրավիրել Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում Պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

3) Ընկերության կողմից Պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն, Պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր),

4) ծանուցել Ընկերությանը, որ սահմանված ժամկետներում Պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5) սահմանված կարգով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառումը՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

10/15/2018

X

VERIFIED OCSP 15-Oct-18 10:37:49 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ